ՀՆԱԳՈՒՅՆ ԱԶԳԵՐԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԷՋԵՐԸ

Առաջադրանքներ

1. Տրված բանաստեղծական տողերում գտի՛ր փոխաբերություն-ները և ընդգծի՛ր:

Ալևոր կամրջի հոնքին ծիծառի մի բույն եմ հիշում: ***(Հ. Սահյան)***

Քանի ձեռքից եմ վառվել, վառվել ու հուր եմ դարձել: ***(Հ. Թումանյան)***

Ամպ ու լուսին իրար փարված՝ դուրս են գալիս միասին: ***(Հ. Թումանյան)***

2. Ընդգծի՛ր տրված տողերում առկա անձնավորման դեպքերը:

ա) Օրոր էր ասում աշունն անտառին,
Բայց դեռ անտառի քունը չէր տանում: ***(Հ. Սահյան)***

բ) Իրիկվա հովն է արթուն արտերին հորովել երգում:

գ) Առվակն ուրախ ծիծաղում էր ու իր ափերը համբուրում:

դ) Սրտիս երգը կոտրվեց ու հեկեկալ սկսեց:

3. Համո Սահյանի «Տա՛ր ինձ, ժամանա՛կ» բանաստեղծությունից դո՛ւրս գրիր անձնավորման և փոխաբերության օրինակներ և բացատրի՛ր տարբերությունները:

Ա՛ռ քո թևերին, տա՛ր ինձ, ժամանա՛կ,
Ես ետ մնալուց շատ եմ վախենում:
Հուշերից որքան հեռու եմ կենում,
Մեկ է, կապում են թևերս նրանք:

Ակնթարթի մեջ դու կուլ ես տալիս
Այնպիսի մի նոր հավիտենություն,
Որ խոսքս, հազիվ հասած բերանիս,
Դառնում է արդեն խորին հնություն:

Դուրս հանիր ինձ այս մթին կիրճերից,
Որ քեզ հասկանամ և ինձ ճանաչեմ:
Փրկիր ինձ այս խուլ ախ ու ճիչերից,
Տուր ինձ քո ոգին, որ ես շառաչեմ:

Տուր ինձ քո ոգին, որ ես շառաչեմ,
Որ ես դադարեմ հանդարտ հոսելուց,
Ինձնից խոսելուց քեզնից չամաչեմ,
Ինձնից չամաչեմ քեզնից խոսելուց:

Տուր ինձ քո ոգին, քո միտքը ներհուն,
Ա՛ռ ինձ հանճարեղ քո տարերքի մեջ,
Որ չմոլորվեմ քո ոլորտներում
Եվ իմ հոգու բարդ տիեզերքի մեջ:

4. Դուրս գրիր բանաստեղծության մակդրային կապակցությունները:

Ես սիրում եմ քո մեղավոր աչքերը խոր,
Գիշերի պես խորհրդավոր.
Քո մեղավոր, խորհրդավոր աչքերը մութ՝
Որպես թովիչ իրիկնամուտ:
Քո աչքերի անծայր ծովում մեղքն է դողում
Որպես գարնան մթնշաղում:
Քո աչքերում կա մի քնքուշ բախտի վերհուշ,
Արբեցումի ոսկե մշուշ:
Մոլորվածին անխոս կանչող փարոսի շող,
Քո աչքերը՝ հոգի տանջող:
Ես սիրում եմ գգվող-անգութ աչքերդ մութ՝
Որպես գարնան իրիկնամուտ: ***(Վ. Տերյան)***

5. Համացանցից կամ այլ աղբյուրներից գտիր առած-ասացվածքներ, որոնք պարունակեն համեմատություն, փոխաբերություն, չափազանցություն և անձնավորում: